ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԶԱՐՈՒՀԻ ՌՈՄԻԿԻ

ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՎԱՐՔԱԳԾԻ ԿՐԻՄԻՆԱԼՈԳԻԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

ԺԲ.00.05 «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2026

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

АРУТЮНЯН ЗАРУИ РОМИКОВНА

КРИМИНОЛОГИЧЕСКИЕ И ПСИХОЛОГИЧЕСКИЕ ПРИЧИНЫ КОРРУПЦИОННОГО ПОВЕДЕНИЯ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.05 – Уголовное право и криминология; уголовно-исполнительное право

ЕРЕВАН – 2026

Ատենախոսության թեման հաստատվել է
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտում

Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ա. Հ. Գաբուզյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ս. Վ. Առաքելյան**
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ **Ա. Հ. Օսիկյան**

Առաջատար կազմակերպություն՝ **ՀՀ արդարադատության ակադեմիա**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2026 թվականի հուլիսի 2-ին՝ ժամը 14^{30}-ին, ՀՀ ԲԿԳԿ-ի՝ Երևանի պետական համալսարանում գործող իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (Երևան – 0025, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2026 թվականի հունիսի 1-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝ իրավ. գիտ. թեկ. **Ժ. Ա. Ստեփանյան**

Тема диссертации утверждена в
Ереванском государственном университете

Научный руководитель: доктор юридических наук, профессор **А. А. Габузян**

Официальные оппоненты: доктор юридических наук профессор **С. В. Аракелян**
кандидат юридических наук, доцент **А. А. Осикян**

Ведущая организация: **Академия юстиции РА**

Защита диссертации состоится 2 июля 2026 г. в 14^{30} часов на заседании Специализированного совета КВОН РА 001 по юриспруденции при Ереванском государственном университете (Ереван - 0025, Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки Ереванского государственного университета.

Автореферат разослан 1 июня 2026 г.

Ученый секретарь специализированного совета:
кандидат юрид. наук **Ж. А. Степанян**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Կոռուպցիոն վարքագիծը շատ վաղ ժամանակներից է հայտնի մարդկությանը, որի մասին հիշատակվում է դեռևս Աստվածաշնչում:

Աստվածաշնչում կարելի է հանդիպել կոռուպցիային առնչվող բազմաթիվ դրվագների՝ Սամուելի որդիների օրինակը, Փելիքսի պատմությունը, Սիմոնի կաշառքի առաջարկը, ինչպես նաև հայտնի Հուդայի օրինակը, ով, կաշառվելով 30 սիկղ արծաթով, մատնեց Քրիստոսին:

Վաղ ժամանակաշրջաններից թողնված բազմաթիվ գրավոր արձանագրություններ նույնպես վկայում են, որ կոռուպցիան ունի խոր արմատներ և ուղեկցել է մարդկությանը հազարամյակներ շարունակ:

Կոռուպցիոն վարքագծին անդրադարձել է նաև հայ մեծ մտածող, գիտնական, օրենսդիր, առակագիր, հասարակական գործիչ Մխիթար Գոշն իր Դատաստանագրքում: Հայ ժողովրդի պատմահայր Մովսես Խորենացին 5-րդ դարում իր ‹‹Ողբ›› ստեղծագործության մեջ նույնպես ցույց էր տալիս, որ փողը և կաշառքը թելադրող էին և ‹‹ողբում էր›› նաև դրա համար:

Ինչպես տեսնում ենք, կոռուպցիան ուղեկցել է մարդկությանն իր գոյության գրեթե ողջ ընթացքում և շարունակում է առ այսօր մեծ վտանգ ներկայացնել պետության և հասարակության համար: Կոռուպցիան քայքայում է հասարակության հիմնասյուները: Կոռուպցիան հատուկ է բոլոր երկրներին, անկախ պետական կառուցվածքից ու քաղաքական զարգացման մակարդակից, պարզապես այն տարբերվում է իր մասշտաբներով, դրսևորման եղանակներով: Ոչ մի պետություն չի կարող պարծենալ այն փաստով, որ իր երկրում բացարձակապես բացակայում է կոռուպցիան: Նույնիսկ այն պետությունները, որոնցում կոռուպցիայի մակարդակը նվազագույնի է հասցված, իրենց վրա կրում են մյուս պետություններում առկա կոռուպցիայի բացասական ազդեցությունը: Ավելին՝ վերջին տասնամյակներում կոռուպցիան ձեռք է բերում ավելի ու ավելի վտանգավոր բնույթ: Կոռուպցիայի համաշխարհային մակարդակը, ըստ Թրանսփարենսի Ինթերնեշնլ կազմակերպության 2025թ. փետրվարի 11–ին հրապարակած զեկունցի, շարունակում է մնալ անհանգստացնող բարձր, իսկ այն նվազեցնելու ջանքերը՝ գնալով թուլացող: Զեկույցը բացահայտել է կոռուպցիայի անհանգստացնող մակարդակներ ամբողջ աշխարհում. երկրների ավելի քան երկու երրորդի ԿԸՀ արժեքները 0-ից (բացարձակապես կոռումպացված) 100 (բացարձակապես մաքուր)

սանդղակի վրա 50 միավորից ցածր են: Համաթվի համաշխարհային միջին ցուցանիշը մնացել է անփոփոխ՝ 43 միավոր ինչն ընդգծում է կոռուպցիայի դեմ հրատապ գործողությունների անհրաժեշտությունը: Ստացվում է մոտ 6.8 միլիարդ մարդ ապրում է այն երկրներում, որոնց ԿԸՀ արժեքը 50-ից ցածր է: Սա համարժեք է աշխարհի 8 միլիարդ բնակչության 85%-ին:

Ստեղծված իրավիճակը հարուցում է միջազգային հանրության տագնապը, որը փնտրում է կոռուպցիային հակազդելու համարժեք միջոցներ: Այդ ոլորտում միջազգային համագործակցությունն իրականացվում է ինչպես ոչ կառավարական, այնպես էլ միջկառավարական մակարդակով:

Արդի իրողությունները վկայում են այն մասին, որ միայն իրավական միջոցներով պայքարը բավարար չէ՝ կոռուպցիոն երևույթների խորքային արմատներին հասնելու և դրանց վերացման նպատակով: Կոռուպցիայի դեմ պայքարը չպետք է ընկալել բացառապես որպես իրավական արձագանք արդեն տեղի ունեցած վարքագծին: Այսինքն, կոռուպցիայի դեմ պայքարը չպետք է միայն ունենա քրեական կամ վարչական բնույթ՝ սկսվի մարդկանց հաշվառման կանգնեցնելով, գույքի հայտարարագրմամբ և ավարտվի պատասխանատվության ենթարկելով:

Կոռուպցիայի դեմ պայքարը պետք է դիտարկվի որպես բազմաբնույթ ոլորտներ ընդգրկող ռազմավարություն, որը ներառում է հոգեբանական, կրիմինալոգիական, սոցիոլոգիական, կրթական և մշակութաբանական բաղադրիչներ:

Բնորոշ օրինակ է Ֆինլանդիայի փորձը, որը, հանդիսանալով կոռուպցիայի ընկալման համաթվով աշխարհի առաջատար երկրներից մեկը, միևնույն ժամանակ չունի ո՛չ պաշտոնապես ընդունված հակակոռուպցիոն ռազմավարություն, ո՛չ էլ մասնագիտացված հակակոռուպցիոն մարմիններ: Այս օրինակը վկայում է, որ հաջող հակակոռուպցիոն քաղաքականությունը պարտադիր չէ հիմնվի միայն ինստիտուցիոնալ լուծումների վրա: Այն կարող է և պետք է խարսխված լինի հանրային վստահության, սոցիալական արժեքների և բարոյականության վրա:

Ուստի, անհրաժեշտ է վերանայել կոռուպցիայի դեմ պայքարի կիրառվող միջոցառումների համակարգը՝ ներառելով նորարարական և ինտեգրատիվ մոտեցումներ, որոնք կարձագանքեն կոռուպցիոն վարքագծի հոգեբանական, վարքային և սոցիալական շարժառիթներին:

Հետևաբար կոռուպցիայի դեմ պայքարում հաջողության հասնելու համար կարևորում ենք կոռուպցիայի առաջացման կրիմինալոգիական-հոգեբանական պատճառների բացահայտումը: Կարծում ենք, որ կոռուպցիոն վարքագծի մոտիվացիոն առանձնահատկությունների, այդ վարքագծի հոգեբանական, սուբյեկտիվ գործոնների բացահայտումը կարող

է նպաստել կոռուպցիոն վարքագծի պատճառական համալիրի ավելի խոր ըմբռնմանը և կանխարգելիչ միջոցառումների արդյունավետությանը: Ի վերջո կոռուպցիան սկիզբ է առնում կոռուպցիոն վարքագծի արդյունքում, իսկ կոռուպցիոն վարքագիծ ցուցաբերում է անձը՝ մարդկային էակը: Բնականաբար կոռուպցիայի դեմ պայքարը հիմնավոր և ամբողջական իրականացնելու համար պետք է սկսել անձից: Նա է կոռուպցիայի հեղինակը:

Ցավոք հազվադեպ է հաջողվում հանդիպել կոռուպցիայի դեմ պայքարի զինանոցում կանխարգելիչ այնպիսի աշխատանքների իրականացմանը, որոնք առաջարկում է կրիմինալոգիան: Մինչդեռ շատ ենք կարևորում, որ կոռուպցիայի դեմ պայքարի մեխանիզմներ մշակելիս առանձնահատուկ ուշադրության արժանանան կոռուպցիոն վարքագծի կրիմինալոգիական-հոգեբանական պատճառները և դրանք հաշվի առնելով կառուցվի կոռուպցիայի դեմ պայքարի ռազմավարությունը: Միայն այս կերպ հնարավոր կլինի ձևավորել առավել արդյունավետ, կայուն և կանխարգելիչ հակակոռուպցիոն միջավայր:

Կոռուպցիայի դեմ պայքարի համար առաջարկվող կրիմինալոգիական-հոգեբանական մոտեցումները կարող են նոր թափ և գործելաոճ մցնել կոռուպցիայի դեմ պայքարի գործիքակազմում:

Վերոգրյալով էլ պայմանավորված է թեմայի արդիականությունը: Կարելի է ասել, ատենախոսությունն արդիական է այնքանով, որքանով արդիական է ներկայիս ժամանակներում այնպիսի սոցիալական չարիքի դեմ պայքարը, ինչպիսին կոռուպցիան է, իսկ վերջինս ոչ միայն մեկ պետության, այլ համայն աշխարհի ուշադրության կիզակետում գտնվող արդիական խնդիրներից է:

Հետազոտության նպատակը և խնդիրները:

Աշխատանքի նպատակն է բացահայտել կոռուպցիոն վարքագծի կրիմինալոգիական-հոգեբանական պատճառները և դրանց համապատասխան մշակել կոռուպցիայի դեմ պայքարի եղանակներ, որոնք կնպաստեն հակակոռուպցիոն քաղաքականության արդյունավետության բարձրացմանը:

Նպատակին հասնելու համար առաջ են քաշվել հետևյալ խնդիրները՝

1. կոռուպցիոն վարքագծի կրիմինալոգիական-հոգեբանական պատճառների բացահայտումը, վերհանումը և վերլուծությունը,

2. հակակոռուպցիոն վարքագծի կրիմինալոգիական-հոգեբանական պատճառների բացահայտումը և վերլուծությունը, մասնավորապես՝ այն ազդակները, պատճառները, որոնք ուղղորդում են անձին հակակոռուպցիոն վարքագիծ և հակակոռուպցիոն դիմադրողականություն դրսևորել,

3. կատարված ուսումնասիրության հիման վրա հակակոռուպցիոն վարքագծի ձևավորմանն ուղղված միջոցառումների մշակումը:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Թեկնածուական ատենախոսության օբյեկտն են կոռուպցիոն վարքագծի կրիմինալոգիական-հոգեբանական պատճառները:

Հետազոտության հիմանական առարկան են կազմում անձի հոգեբանությունը, կրիմինալոգիական-հոգեկան գործընթացները և երևույթները:

Հետազոտության թեմայի մշակվածության աստիճանը և տեսական հիմքը:

Հայ իրականությունում կոռուպցիայի պատճառների և պայքարի մեխանիզմներին անդրադարձել են Ա. Գաբուզյանը, Ս. Ծաղիկյանը, Ա. Մարգարյանը, Ս. Առաքելյանը, Գ.Սարգսյանը և այլք:

Կոռուպցիային, վերջինիս պատճառներին, վտանգավորության և դրա դեմ պայքարին նվիրված են նաև մի շարք այլ օտարերկրյա հեղինակների աշխատություններ: Մասնավորապես՝ Վ.Վ. Լունեևի, Ա.Մ. Նագիմովայի, Յ.Վ.Գոլիկի, Յ.Կոմլևի, Ա.Վ. Զակսի, Վ. Ի. Բեռեստենի, Կ.Ֆ.Ամիրովի, Ս.Ի.Գալիևի, Պ. Յանիի, Վոլժենկինի, Ս. Մաքսիմովի, Գրահամ Բրուկսի, Ադամ Գրայսերի, Ռոբերտ Քլիթգարդի և այլոց աշխատությունները:

Նշված հեղինակների աշխատություններում հանգամանալից քննարկվել են կոռուպցիային առնչվող բազմաթիվ հիմնախնդիրներ՝ կոռուպցիայի հասկացությունը, դրա սոցիալական վտանգավորությունը, կանխարգելման միջոցները: Սակայն ուսումնասիրությունների բազմազանության մեջ կոռուպցիոն վարքագծի կրիմինալոգիական-հոգեբանական պատճառները, որպես այդպիսին, ամբողջական և թիրախավորված չեն ուսումնասիրվել, հպանցիկ են ուսումնասիրվել: Այդ մասով առկա են քիչ թվով աշխատություններ: Առանձնացնենք միայն Գ.Ա. Սատարովի ‹‹Հոգևոր հարաբերությունների ջերմությունը. ինչ-որ մի բան կոռուպցիայի վերաբերյալ››, Ի.Վ. Դևյատովսկայայի «Անձի կոռուպցիոն վարագծի հոգեբանական կանխատեսումները և դրա շտկումները», Է. Է. Սիմանյուկի «Կոռուպցիայի ֆենոմենի հասկացությունը հոգեբանության շրջանակներում», Քենդրա Դուփույի, Սիրի Նեսեթի «Կոռուպցիայի ճանաչողական հոգեբանություն» հոդվածները և Օ.Վ.Վաննովսկայայի «Պետական ծառայողների կոռուպցիոն վարքագծի հոգեբանությունը›› մենագրությունը:

Ատենախոսության տեսական հիմք են կազմել կրիմինալոգիայի, հոգեբանության, քրեական իրավունքի ոլորտում գիտական ուսումնասիրություններ իրականացրած հեղինակների մի շարք

աշխատություններ՝ գիտական հրապարակումներ, զեկույցներ, ինչպես նաև գիտական և գործնական այլ նյութեր:

Հետազոտության իրավական և փորձառնական հիմքը:

Ատենախոսության իրավական հիմք են կազմել ՀՀ քրեական օրենսգիրքը, ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիան, Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիան, Կոռուպցիայի մասին քաղաքացիական իրավունքի կոնվենցիան:

Հետազոտության փորձառնական հիմք են հանդիսացել 2015-2022թթ-ին պետական աշխատակիցների հարցազրույցների արդյունքում ստացված տվյալները: Հարցազրույցները տեղի են ունեցել ՀՀ պետական կառավարման ակադեմիայի վերապատրաստման բաժնում՝ պետական աշխատակիցների համար նախատեսված կոռուպցիայի և բարեվարքության թեմայով վերապատրաստման դասընթացների շրջանակներում, որին մասնակցել են ամենատարբեր ոլորտների աշխատակիցներ: Վերապատրաստման դասընթացից հետո նրանք մասնակցել են նաև հարցումներին: Դասընթացների ժամանակ հնչեցված կարծիքները, ինչպես նաև դասընթացի մասնակիցների կողմից հնչեցված խոստովանությունները կոռուպցիոն վարքագծի պատճառների մասով նույնպես ենթարկվել են հետազոտական վերլուծության և ներառվել են հետազոտության մեջ:

Հետազոտության փորձառնական հիմք են հանդիսացել նաև 174 պաշտոնատար անձանց (դատավոր, դատախազ, քննիչ, դատավորի թեկնածու, պրոբացիայի ծառայության աշխատակից) շրջանում իրականացված լայնածավալ հարցումները՝ ըստ նախապես մշակված ընդգրկուն հարցաշարի՝ ձևաթղթի: Ձևաթուղթ և հարցումների ամփոփ հաշվետվությունները կցված են թվով 4 հավելվածների տեսքով, իսկ դրանց ամփոփումները մանրամասնորեն ներկայացված են աշխատանքում:

Ուսումնասիրվել են նաև այլ հեղինակների կողմից իրականացված հետազոտությունների արդյունքները:

Հետազոտության ընդհանուր մեթոդաբանությունը:

Ատենախոսության մեթոդաբանական հիմք են հանդիսացել դիտման, դիալեկտիկական, համակարգային, համեմատական, տրամաբանական մեթոդները:

Հետազոտության ընթացքում կիրառվել են նաև այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են վիճակագրական տվյալների վերլուծությունը, հարցազրույցը՝ ֆոկուս խմբերի, հարցումները 174 պաշտոնատար անձանց շրջանում, որոնց արդյունքները ամփոփվել են SPSS (Statistical Package for the Social Sciences) ծրագրի կիրառմամբ:

Հետազոտության ընթացքում հարցումների պատասխանները Ատենախոսության համապատասխան պարագրաֆներում մանրամասն

վերլուծված են: Դրանք դրված են նաև մեր կողմից կատարված տեսագործնական ընդհանրացումների հիմքում:

Սույն ատենախոսությունում քանական մեթոդների հետ մեկտեղ կիրառվել է նաև որակական հետազոտության մեթոդ՝ ֆոկուս խմբային հարցազրույցը, որի նպատակն է եղել բացահայտել ուսումնասիրվող իրավական երևույթի սոցիալ-հոգեբանական ընկալումները, մասնագիտական դիրքորոշումները և վարքագծային մոտիվացիաները, որոնք վիճակագրական տվյալներով ամբողջությամբ չեն արտացոլվում:

Հետազոտության գիտական նորույթը:

Հայրենական գիտության մեջ փորձ է արվել նպատակադրված և համալիր կերպով ուսումնասիրել կոռուպցիոն վարքագծի կրիմինալոգիական և հոգեբանական պատճառները: Այս մասով փորձ է արվել նաև կոռուպցիոն վարքագիծը դիտարկել ոչ միայն որպես իրավախախտում, այլ նաև վարքաբանական-կոգնիտիվ գործընթաց:

Աշխատանքի գիտական նորույթը կոռուպցիոն վարքագծի կրիմինալոգիական և հոգեբանական պատճառները ամբողջական և խորությամբ բացահայտելու ու դրա հիման վրա համապատասխան հակակոռուպցիոն վարքագծի ձևավորման մեխանիզմները մշակելու մեջ է:

Ատենախոսության գիտական նորույթն արտահայտվում է **պաշտպանության ներկայացվող դրույթներում**, որոնք իրենց էությամբ բացահայտում են կոռուպցիոն վարքագծի ոչ ավանդական՝ հատկապես հոգեբանական և նեյրոկոգնիտիվ խորքային պատճառները, ինչպես նաև առաջարկում են կոնկրետ մեխանիզմներ՝ դրանց չեզոքացման և կանխարգելման համար: Մասնավորապես՝

1. Հաշվի առնելով կոռուպցիոն հանցագործությունների բազմաշերտ բնույթը դրանց խորքային կրիմինալոգիական պատճառները՝ առաջարկվում է ստեղծել կրիմինալոգիական ուսումնասիրությունների ինստիտուտ, որտեղ հիմնական ուղղություններից կլինի կոռուպցիայի դեմ պայքարի մեխանիզմների մշակումը, մասնավորապես կոռուպցիայի պատճառ կամ պայման հանդիսացող գործոնների բացահայտումը, խորքային ուսումնասիրությունը և դրանց չեզոքացմանն ուղղված գործողությունները: Նման մասնագիտացված մարմնի անհրաժեշտությունը կարևորվում է նրանում, որ այն գիտությունը կապում է հակակոռուպցիոն քաղաքականության հետ և ցուցաբերելով գիտահեն մոտեցում՝ այն կբարձրացնի հակակոռուպցիոն քաղաքականության արդյունավետությունը:

2. Հաշվի առնելով ներկայացված հետազոտությունները և վերլուծությունները, ինչպես նաև այն հանգամանքը, որ պետական պաշտոնյաներն ունեն ոչ միայն իրավական, այլ նաև էթիկական, բարոյական, վարքաբանական պարտականություններ՝ առաջարկվում է

իրենց համար ներմուծել բարեվարքության և առաքինության ստուգման նպատակով հակակոռուպցիոն վարքագծի ռիսկերի գնահատման մեխանիզմ, որը պետք է հիմնված լինի կրիմինալոգիական, հոգեբանական և նեյրոկոգնիտիվ մոտեցումների համադրության վրա: Այն կպարզի տվյալ անձի վարքագծի ընտրության կանխատեսելիությունը, կոռուպցիոն ազդակներին արձագանքելու նախատրամադրվածությունը՝ իմպուլսների մղումներին վերահսկման թուլությունը, անհատական գծերը (նարցիսիզմ, մաքիավելիզմ, փսիխոպաթիա), վարքագիծը բարոյական դիլեմաների ընտրության ժամանակ, կոմֆորմիզմը, խմբային ճնշման ենթարկվելու հավանականությունը, սթրեսներին արձագանքելու մեխանիզմները, ինչպես նաև կպարզի՝ անձի ուղեղն ինչպես է նեյրոկոգնիտիվ մակարդակում արձագանքում շահի, պատժի, իշխանության և սոցիալական նորմերի տարբեր ազդեցություններին:

3. Առաջարկվում է օրենսդրորեն սահմանել խրախուսական նորմեր՝ բացառելով կաշառքի միջնորդների և կաշառք տվողների քրեական պատասխանատվությունը, եթե վերջիններս օրենքով սահմանված կարգով տեղեկացնում են իրավապահ մարմիններին իրենց մասնակցությամբ իրականացված կոռուպցիոն վարքագծի մասին: Վերջինս երկու նպատակ են հետապնդում՝ կոռուպցիոն հանցագործությունների կանխում և բացահայտում: Նման իրավիճակում մի շարք կոռուպցիոն գործարքներ ուղղակի տեղի չեն ունենա: Խոսքն այն դեպքերի մասին է, երբ կողմերն միմյանց կատարյալ չեն ճանաչում և վստահում կամ այլ կերպ համոզված չեն, որ մյուս կողմը ‹‹դուրս չի գա›› հանցավոր գործարքից՝ թողնելով իրեն մենակ քրեական պատժի ճիրաններում: Նման իրավիճակում անձը որոշում կայացնելու փուլում կաշկանդված կլինի և ավելի երկար կմտածի կոռուպցիոն տարբերակը դիտարկել որպես ընդունելի ընտրություն, թե ոչ, ինչը կրկնակի կդժվարացնի հանցավոր մտադրություն իրականացնելու հնարավորությունը: Հետևաբար առաջարկվող նորմերը երբեմն կարող են կանխել հանցավոր արարքը, բացի դա՝ որոշ դեպքերում կհեշտացնեն նաև կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման գործընթացը: Հատկապես, այդ իրավիճակները կարևոր են կաշառքի շորթումների դեպքում: Հայելային սկզբունքով՝ պաշտոնատար անձանց վրա, անկախ ոլորտից, պետք է պարտականություն դրված լինի՝ կաշառք տալու, առաջարկելու, խոստման յուրաքանչյուր դեպք հաղորդել իրավապահ մարմիններին, ինչն էլ հիմք կհանդիսանա այդ պարտականությունը չկատարելու դեպքում նրանց քրեական պատասխանատվության ենթարկելու համար:

4. Կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության համար առաջարկվում է ընդունել «Կոռուպցիայի դեմ պայքարի մասին» օրենք:

Դրանում առաջնահերթ պետք է տրվեն օգտագործվող հիմնական հասկացությունների բնորոշումները, սահմանվեն կոռուպցիայի հետ կապված իրավախախտումների սուբյեկտները, կոռուպցիայի դեմ պայքարի սկզբունքները, այդ երևույթի դեմ պայքարող մարմինների շրջանակը, որպիսիք, բացի ամենօրյա գործառնական պարտականություններն իրականացնող մարմիններից (իրավապահ մարմիններ, կենտրոնական բանկ, ֆինանսների նախարարության հարկային մարմինների վերստուգիչ ստորաբաժանումներ) կարող են լինել անկախ, հատուկ հանձնաժողովները:

5. Կոռուպցիոն վարքագծի խորքային պատճառները երբեմն գալիս են անձի կոլեկտիվ անգիտակցականից: Կոլեկտիվ անգիտակցականում կարող է ձևավորվել կոռուպցիոն վարքագծի նախատրամադրվածություն, որը նպաստավոր պայմաններում կարող է ակտիվանալ: Մասնավորապես, դիտարկելով մեր ազգության կոլեկտիվ անգիտակցականը՝ տեսնում ենք, որ հայ ժողովուրդը դարեր շարունակ, գրեթե իր պատմության ողջ ընթացքում, չի ունեցել պետություն և պետականություն: Գտնվելով օտար տերությունների լծի ներքո՝ օտարի/թշնամական պետության օրենքներին չենթարկվելը ոչ միայն բացասական վարքագիծ չի համարվել, այլ շատ դեպքերում հմտություն և հերոսական քայլ է գնահատվել: Բարեբախտաբար այսօր ունենք պետություն և պետականություն, բայց կոլեկտիվ անգիտակցականով փոխանցվող վարքագծային այդ նախատրամադրվածությունը (օրենքից խուսափելը, շրջանցելը, սահմանազանցելը, չարաշահելը) շատ դեպքերում դեռ կարող է պահպանվել: Այս մեխանիզմով ենք նաև բացատրվում, թե ինչու որոշ մարդիկ հեշտությամբ ընդունում են կոռուպցիոն վարքագիծը, անտեսում են հանրային շահը, սեփական պետությանը ընկալում են որպես արտաքին կամ վերնախավային ուժ, իսկ օրենքը ընկալում են ոչ թե որպես ‹‹մեր›› սեփականություն, այլ որպես շրջանցելի մեխանիզմ: Վերջինս կարող է նպաստել այնպիսի խեղաթյուրված հոգեբանական միջավայրի ձևավորմանը, որտեղ կոռուպցիոն վարքագիծը չի դառնում ամոթալի վարք, այլ ինչ - որ տեղ անգամ դառնում է հմտություն:

6. Ա. Անձի հոգեկանի պաշտպանական մեխանիզմները երբեմն կարող են նախադրյալ հանդիսանալ հանցավոր, սոցիալապես ոչ ընդունելի, սակայն սուբյեկտիվորեն «արդարացված» վարքագիծ: Մասնավորապես՝ արտամղումը, ինտելեկտուալիզացիան, տեղակալումը, հերքումը, հետադիմությունը, երկվությունը, սուբլիմացիան, կարող են վերածվել կոռուպցիոն վարքագծի ներքին հիմնավորման կամ ներքին խնդիրների լուծման միջոցների՝ կոռուպցիոն վարքագծի պատճառների: Այստեղ առանցքային նորույթն այն է, որ անձի հոգեկանի պաշտպանական մեխանիզմները դիտարկվում են որպես կոռուպցիոն վարքագծի

պատճառաբանական հիմք, ձևավորման առաջնային հոգեբանական պատճառ, այլ ոչ դրա հետագա արդարացում:

Բ. Ապերցեպցիայի և այլասիրության աղավաղված ընկալման հետևանքով անձը կարող է չգիտակցելով արդարացնել կոռուպցիոն վարքագիծը, որպես բարեկեցություն կամ աջակցություն այլոց: Նման իրավիճակում ապերցեպցիան և այլասիրությունը կարող են դառնալ կոռուպցիոն վարքագծի պատճառներ:

Գ. Հոգեբանական ազդեցության տեխնիկաների (սոցիալական ճնշում, հեղինակության ազդեցություն, անձի վատ իրավիճակը օգտագործելը, ֆրեյմինգ, լեյբլավորում և այլն) կիրառման արդյունքում հնարավոր է անգամ հակակոռուպցիոն մտածողություն ունեցող անձի վարքի շեղում դեպի կոռուպցիոն գործելակերպի: Նման հոգեբանական ազդեցությունների պայմաններում օրինապահ վարքագիծ ունեցող անձի հակակոռուպցիոն դիմադրողականության զսպիչ մեխանիզմները կարող են չաշխատել:

7. Առաջարկվում է իրականացնել հեռուստատեսային և մուլտմեդիա բովանդակության հակակոռուպցիոն փորձաքննություն, բացառելով այն բովանդակության հեռարձակումը, որը պարունակում է կոռուպցիոն վարքագիծ սերմանող տարրեր: Բացի այդ, առաջարկվում է մշակել հատուկ հակակոռուպցիոն կրթական բովանդակության մուլտֆիլմեր, ինչը նախադպրոցական տարիքից սկսած կներդնի կոռուպցիոն վարքագիծ ծնող պատճառների չեզոքացմանն ուղղված վարքագծային և արժեքային համակարգ:

8. Առաջարկվում է նաև նախադպրոցական տարիքից սկսած ներդնել կոռուպցիոն վարքագիծ ծնող պատճառների չեզոքացմանն ուղղված վարքագծային և արժեքային համակարգի ճիշտ ձևավորման կրիմինալոգիական բնույթ ունեցող կրթական ծրագրեր, որոնք ուղղված են սոցիալական նորմերի սերտմանը, հանրային շահի ընկալման ձևավորմանը և կոռուպցիոն ռիսկերի նվազմանը: Այսպիսի կրթական մոտեցումները ոչ միայն սովորեցնում են ճանաչել և հարգել օրենքը, այլև կառուցում են ներքին հոգեբանական սահմանափակումներ, որոնք հետագայում նվազեցնում են կոռուպցիան վարքագծի հավանականությունը: Ներդրված համակարգը պետք շարունակվի դպրոցում, ուսումնական հաստատություններում: Հակակոռուպցիոն դիմադրողականության ուժեղացման համար հակակոռուպցիոն կրիմինալոգիական կրթությունը պետք է վերապատրաստման ձևով անցնեն նաև պետական աշխատակիցները: Ծրագրերը պետք է միտված լինեն ոչ միայն գիտակցական, այլև ենթագիտակցական մակարդակի վրա ազդելուն: Այստեղ կարևորվում է նաև անհատական աշխատանքները, խոցելի խմբերի, շեղվող վարքագծի հայտնաբերումը և շտկումը, նեյրոկոգնիտիվ զարգացման ինտեգրումը:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը:

Ատենախոսության տեսական նշանակությունն այն է, որ ներկայացված աշխատանքը՝ կոռուպցիոն վարքագծի կրիմինալոգիական-հոգեբանական պատճառների ՀՀ-ում կատարված առաջին համալիր հետազոտությունն է, որի արդյունքները կարող են հետագա ուսումնասիրությունների տեսական հիմք հանդիսանալ:

Ատենախոսության մեջ ներկայացված ուսումնասիրությունների արդյունքները կարող են օգտագործվել կրիմինալոգիա, քրեական իրավունք, քրեակատարողական իրավունք ուսումնական դասընթացների դասավանդման ընթացքում:

Ատենախոսության մեջ ներկայացված առաջարկությունները կարող են կյանքի կոչվել՝ հակակոռուպցիոն վարքագիծ ձևավորելով հասարակության մեջ:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը:

Ատենախոսությունը քննարկվել է Երևանի պետական համալսարանի քրեական իրավունքի ամբիոնում, որտեղ հաստատվել են ատենախոսության մեջ առկա հիմնական տեսական վերլուծություններն ու եզրակացությունները: Վերջիններս տեղ են գտել նաև հեղինակի կողմից ատենախոսության թեմայով հրապարակված և դրա բովանդակությունն արտացոլող գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, որոնք ներառում են տասնմեկ պարագրաֆներ, եզրակացությունից, օգտագործված իրավական ակտերի ու գրականության ցանկից և չորս հավելվածներից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում ներկայացվել են հետազոտության թեմայի արդիականությունը, մշակվածության աստիճանը, օբյեկտը և առարկան, նպատակը և խնդիրները, հետազոտության մեթոդաբանական, տեսական, իրավական և փորձառական հիմքերը, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող դրույթները:

Ատենախոսության առաջին գլուխը՝ **«Պահանջմունքների անբավարարության դերը կոռուպցիոն վարքագծի ձևավորման մեջ»** վերտառությամբ, բաղկացած է երկու ենթագլխից:

«Պահանջմունքները որպես կոռուպցիոն վարքագծի պատճառ» վերտառությամբ, առաջին գլխի առաջին ենթագլխում նախ ներկայացվում է անձի հիմնական պահանջմունքների հիերարխիան և դրանց գործելու

մեխանիզմները, համաձայն որի անձի պահանջմունքները ծնվում են հերթականությամբ: Պահանջմունքների աստիճանակարգության էությունն այն է, որ մինչ ներքին սանդղակում գտնվող պահանջմունքները գոնե նվազագույն չափով չեն բավարարվում, ապա չեն ծնվում առավել վերին սանդղակում գտնվող պահանջմունքները:

Այսինքն՝ մարդիկ, ում պահանջմունքներն ըստ աստիճանակարգության նվազագույն չափով բավարարված չեն, հնարավոր է ցուցաբերեն կոռուպցիոն վարքագիծ, քանի որ անձի հակակոռուպցիոն վարքագիծը, գտնվելով պահանջմունքների բուրգի վերին հատվածում, պահանջում է, որ մինչ իրեն (հինգերորդ սանդղակին) հասնելը բավարարված լինեն մյուս պահանջմունքները՝ նախևառաջ ֆիզիոլոգիական, այնուհետև՝ անվտանգության, սիրո և պատկանելության, այնուհետև՝ հարգանքի և ինքնահարգանքի և ինքնաիրականացման:

Նույնիսկ այն անձը, ով դրսևորում է հակակոռուպցիոն վարքագիծ և օժտված է հակակոռուպցիոն դիմադրողականությամբ, կդժվարանա դրսևորվել այդպես այն պայմաններում, երբ հատկապես ֆիզիոլոգիական, կենսաբանական պահանջմունքները գտնվում են խիստ անբավարար վիճակում: Այդ ժամանակ անգամ քրեական խիստ պատժի ենթարկվելու վախը հնարավոր է հետ չպահի իրեն հանցավոր գայթակղությունից: Օրինակ՝ Հին Հռոմում գրպանահատության համար ամբոխի առջև հրապարակայնորեն գրպանահատներին կախաղան էին բարձրացնում, բայց ամենաշատ գրպանահատությունը տեղի էր ունենում հենց այդ ժամանակ, քանի ամբոխը հավաքված է: Այսինքն՝ պահանջմունքը/կարիքը ստիպում է մարդուն մի կողմ դնել անգամ մահով պատժվելու վախը: Նման իրավիճակները հաշվի չառնող օրենքների կարգավորումներն արդյունավետ չեն, քանի որ բնության կերտած օրենքները մարդկանց ստեղծած օրենքներով և կոնվենցիաներով չեն փոխվի կամ շատ դժվար կփոխվեն, քանի որ մարդ չի կարող հաղթահարել իր բնությունը: Հետևաբար կոռուպցիան այս ենթագլխում դիտարկվել է որպես գոյաբանական ճնշման արդյունք, որտեղ գործի է դրվում ինքնապահպանման բնազդն իր հետևանքներով:

‹‹Անձի գերաճած (դեֆորմացված) պահանջմունքները և ցանկությունները՝ որպես կոռուպցիոն վարքագծի պատճառ›› վերտառությամբ առաջին գլխի երկրորդ ենթագլխում արդեն քննարկում է անձի ոչ թե բնական պահանջմունքները, այլ գերաճած, խեղաթյուրված պահանջմունքները, ինչպես նաև պահանջմունքների խեղաթյուրված համակարգը: Ընդգծվում է, եթե բնական պահանջմունքների անբավարարության դեպքում անձը կարող է ընտրել կոռուպցիոն ճանապարհը, ապա վերջինս առավել հավանականությամբ կարող է տեղի

ունենալ գերաճած պահանջմունքների և ցանկությունների դեպքում: Այս մասով պետք է տարբերել նաև գերաճած պահանջմունք և ցանկություն հասկացությունները կոռուպցիոն վարքագծի պատճառը ճիշտ ներկայացնելու համար: Որքան գերաճած են անձի պահանջմունքները և ցանկությունները, այդքան կոռուպցիոն վարքագիծ դրսևորելու ռիսկն ավելի է մեծանում: Ուստի կանխարգելման տեսանկյունից առաջնահերթ նշանակություն ունի նշված կրիմինալոգաիական և հոգեբանական այս խեղաթյուրման գործընթացների հայտնաբերումը, վարքագծային կարգավորման մեխանիզմների մշակումը և ուղղիչ միջամտությունները՝ մինչև կոռուպցիոն վարքագծի ձևավորումը:

‹‹Անձի սոցիալականացման առանձնահատկությունները որպես կոռուպցիոն վարքագծի պատճառ›› վերտառությամբ երկրորդ գլուխը բաղկացած է չորս ենթագլխից:

‹‹Մանկության դերը կոռուպցիոն վարքագիծ ձևավորելու գործում›› վերտառությամբ երկրորդ գլխի առաջին ենթագլխում քննարկվում է անձի սոցիալականացման ամենավաղ հասակում հանդիպող խնդիրները, որոնք կարող են անձի մեջ ձևավորել կոռուպցիոն վարքագիծ:

Կոռուպցիոն վարքագծի պատճառահետևանքային համալիրի ամբողջական և խոր ուսումնասիրությունն անկասկած պետք է սկսել անձի ձևավորման ամենավաղ տարիքից՝ մանկությունից: Այս ենթագլխում սկզբում ներկայացվել է Յուրի Անտոնյանի կողմից իրականացված հետազոտության արդյունքները: Հետազոտությունն իրականացվել է կոռուպցիոն հանցագործությունների համար դատապարտված անձանց խմբերում:

Համաձայն հետազոտության արդյունքների մի շարք կոռուպցիոներներ խաղացողներ են, քանի որ կոռուպցիան շատերի մոտ ասոցացվում է խաղի հետ: Այդ խաղին մասնակցելը իրենց հաճույք է պարգևում, սակայն նրանք դա չեն գիտակցում, քանի որ այդ ամենը տեղի է ունենում ենթագիտակցորեն: ‹‹Խաղից›› ստացած մեծ բավարարվածությունն է գլխավոր պատճառն այն բանի, որ այդ անձիք երկար տարիների ընթացքում կատարում են կոռուպցիոն հանցագործություններ՝ չգիտակցելով, թե ինչումն է իրենց վարքագծի իրական պատճառը: Իսկ ինչու մեծահասակ անձի մոտ կարող է առաջանալ նման վարքագիծ՝ խաղի պահանջմունք, սույն ենթագլխում փորձ է արվել ի հայտ բերել, որպեսզի կանխարգելել նման նախադեպերը: Կարծում ենք, որ պատճառներից է անավարտ մանկությանը: Վերջինիս գտնում ենք ունի երեք հիմնական ենթապատճառներ, որոնք քննարկվել է սույն ենթագլխում և փորձ է արվել յուրաքանչյուրի համար առաջարկել որոշակի գործողություններ, որոնք կարող են այս մասով չեզոքացնել կամ կանխարգելել հանցածին տարրերը: Առաջին հայացքից կարող է թվալ, որ կոռուպցիայի դեմ պայքարի գործում նման խնդիրներ

կարևորելը և դրա դեմ պայքարի մեխանիզմներ մշակելը այդքան էլ էական չէ, կամ կոպիտ ասած առհասարակ ուշադրություն չպետք է հատկացնել նման ‹‹մանրուքների››, բայց բավական է ականատես լինել, թե երբեմն ինչպես են այդ ‹‹մանրուքից›› խորտակվում պետության հիմնասյունները՝ մինչև անգամ պետականության կորուստի վտանգ է առաջանում կարելի է նորովի գնահատել փոքր քայլերի արվեստը կոռուպցիայի դեմ պայքարի գործում:

‹‹Ընտանիքը՝ որպես սոցիալականացման գործոն կոռուպցիոն վարքագծի ձևավորման գործընթացում›› վերտառությամբ երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում ներկայացվել է կոռուպցիոն վարքագծի ձևավորման մեջ ընտանիքի ազդեցությունը: Վերջինս անձի վրա ամենաուժեղն է, տարիքի հետ այն կարող է թուլանալ, բայց երբեք չի սպառվում ամբողջությամբ: Քննարկել և ի հայտ է բերվել ընտանիքում առկա քրեածին մի շարք կարևոր խնդիրներ, որոնք կարող են դառնալ կոռուպցիոն վարքագծի պատճառներ, ինչպես նաև ներկայացրել ենք տարբերակներ դրանք չեզոքացնելու համար:

Պատահական չէ, որ երեխայի իրավունքների պաշտպանությանը միտված միջազգային փաստաթղթերում կարևորվում է ընտանիքի դերը:

Ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը հակակոռուպցիոն պայքարում կարելի է արմատական հաջողությունների հասնել այն դեպքում, երբ հակակոռուպցիոն մտածելակերպն ու արժեքները ձևավորվում են մարդու մեջ վաղ հասակից, իսկ վաղ հասակում այն ձևավորվում է որպես կանոն ընտանիքի միջոցով:

‹‹**Կրթական հաստատությունների և կրթության դերը կոռուպցիոն վարքագիծ ձևավորելու գործում››** վերտառությամբ երկրորդ գլխի երրորդ ենթագլխում քննարկվել են այն կրիմինալոգիական, հոգեբանական, սոցիալական այն գործոնները, որոնք կրթական միջավայրում կարող են նպաստել կոռուպցիոն մտածողությանը, հակահիրավական վարքագծի և բարոյական շեղումների ձևավորմանը: Քննարկվել է դպրոցի, բուհի և ընդհանուր կրթական համակարգի ազդեցությունը անձի իրավագիտակցության, բարոյական արժեքների և օրինապահ վարքագծի ձևավորման վրա: Այստեղ առանձնահատուկ ուշադրություն է դարձվում կրթական գործընթացում առկա այն երևույթներին, ինչպիսիք են անարդար մրցակցությունը, հովանավորչությունը, անարդարությունը, կոռուպցիոն վարքագծի հանդեպ հանդուրժողական վերաբերմունքի ձևավորումը:

Կարևորվել է նաև հակակոռուպցիոն իրավագիտակցության դերակատարությունը և հակակոռուպցիոն կրթություն ստանալու անհրաժեշտությունը:

‹‹Կոռուպցիոն վարքագիծ ուսուցանող այլ ազդակներ›› վերտառությամբ երկրորդ գլխի չորրորդ ենթագլխում ներկայացվում է կոռուպցիային նպաստող ևս մի շարք գործոններ: Հայտնի է, որ կոռուպցիոն վարքագիծը մարդու մոտ ձևավորվում է բազմաթիվ կրիմինոգեն գործոնների ազդեցությամբ: Մեզ շրջապատող աշխարհում մի շարք արտաքին ազդակներ հանրության գիտակցությունում հանցավոր/կոռուպցիոն վարքագիծ կարող են սերմանել: Դրանք գիտակցության վրա ազդեցության այն միջոցներն են, որոնք ծրագրավորում և ղեկավարում են անձի վարքը: Այդ ամենը կարող են իրականացվել համապատասխան հանցածին տարրեր ունեցող ֆիլմերի, մուլտֆիլմների, համակարգչային խաղերի և այլ հասարակությանը ներկայացվող հրապարակումների միջոցով, որոնք մանրամասնորեն (նաև անվանական) ուսումնասիրվել են սույն ենթագլխում: Դրանք որպես տեղեկատվական գործիք կարող են թե նվազեցնել, թե խթանել կրիմինոգեն միջավայրում կոռուպցիոն վարքագծի հավանականությունը՝ ուղղորդելով հասարակության ընկալումները և վարքագիծը:

Այս խնդիրներն ի հայտ բերելով՝ ներկայացվել է նաև տարբերակներ այդ մասով կոռուպցիայի դեմ պայքարելու, քրեածին ազդակները չեզոքացնելու ուղղությամբ: Վերլուծությունները հիմնված են կրիմինալոգաիական, հոգեբանական, սոցիոլոգիական մոտեցումների համադրման վրա, ինչը հնարավորություն է տալիս բազմակողմանի գնահատել քննարկվող գործոնների ազդեցությունը կոռուպցիոն վարքագծի առաջացման և կանխարգելման գործընթացում:

‹‹Կոռուպցիոն վարքագիծ ձևավորող կրիմինալոգիական և հոգեբանական ներանձնային խորքային նախադրյալները և կոռուպցիայի կանխումը›› վերտառությամբ երրորդ գլուխը բաղկացած է հինգ ենթագլխից:

Կոռուպցիոն վարքագծի նախադեպը՝ որպես կոռուպցիոն վարքագծի պատճառ վերտառությամբ երրորդ գլխի առաջին ենթագլխում փորձ է արվել ի հայտ բերել անձի հոգեկանում առկա այն կրիմինալոգիական և հոգեբանական խորքային նախադրյալները, որոնք կարող են հանգեցնել կոռուպցիոն վարքագծի: Մասնավորապես ներկայացվել է, թե ինչպես անձը, արդեն իսկ ծնվելով, կարող է ունենա կոռուպցիոն կամ հակակոռուպցիոն վարքագծի տրամադրվածություն՝ կախված իր և իր նախնիների կյանքի փորձի հետ: Այստեղ առաջին անգամ փորձ է արվել բացահայտել հայ ժողովրդի կոռուպցիոն վարքագծի ձևավորման սկզբնապատճառների ակունքները:

‹‹Անձի պաշտպանական մեխանիզմները՝ որպես կոռուպցիոն վարքագծի պատճառ›› վերտառությամբ երրորդ գլխի երկրորդ ենթագլխում

քննարկվել են անձի պաշտպանական մեխանիզմները կոռուպցիոն վարքագծի պատճառահետևանքային համալիրում:

Առաջ քաշված խնդիրներից և դրանց վերլուծության արդյունքներից, ինչպես նաև մեր կողմից իրականացված հետազոտություններից պարզվել է, որ անձի հոգեկանի պաշտպանական մեխանիզմները, մասնավորապես՝ արտամղումը, ինտելեկտուալիզացիան, տեղակալումը, բացասումը, հետադիմությունը, սուբլիմացիան կարող են դառնալ կոռուպցիոն վարքագծի պատճառներ: Միաժամանակ ներկայացվել է, որ պաշտպանական մեխանիզմներից որոշները՝ համապատասխան իրավիճակում, կարող են դառնալ նաև հակակոռուպցիոն վարքագծի խթան: Այստեղ առանցքային է, որ անձի հոգեկանի պաշտպանական մեխանիզմները դիտարկվել է որպես կոռուպցիոն վարքագծի պատճառաբանական հիմք, ձևավորման առաջնային հոգեբանական պատճառ, այլ ոչ դրա հետագա արդարացում:

‹‹Ներանձնային առանձնահատկությունները և խնդիրները՝ որպես կոռուպցիոն վարքագծի պատճառ›› վերտառությամբ երրորդ գլխի երրորդ ենթագլուխը նվիրված է ներանձնային առանձնահատկությունների և հոգեբանական խնդիրների ուսումնասիրությանը՝ որպես կոռուպցիոն վարքագծի ձևավորման պատճառական գործոններ:

Քննարկվել են անձի հատկանիշներ, արժեհամակարգում առկա խնդիրներ, որոնք կարող են հանգեցնել կոռուպցիոն վարքագծի: Ուսումնասիրության ընթացքում ներկայացվել է, թե ինչպես կոռուպցիոն վարքագծի պատճառ կարող է դառնալ այլասիրությունը և էմպաթիան, ինչպես նաև անձի մեջ առկա հոգեբանական այլ խնդիրները (սթրեսը, դեպրեսիան, վախը):

‹‹Անձի վրա ներգործող ազդեցության միջոցները՝ որպես կոռուպցիոն վարքագծի պատճառ և կոռուպցիայի կանխումը›› վերտառությամբ երրորդ գլխի չորրորդ ենթագլխում նշվել է, որ կոռուպցիան հոգեբանական առումով ոչ միշտ է գիտակցված ընտրություն, հաճախ այն իրավիճակային արձագանք է, պայմանավորված սոցիալական սպասումներով և անձի վրա ներգործություն ունեցող ազդեցության միջոցներով:

Այստեղ կոռուպցիոն վարքագիծը չի սահմանափակվում օրենքի խախտման փաստով և կոռուպցիոն վարքագիծը չի դիտարկում միայն որպես հանցանք, այլ ուսումնասիրում է որպես գլխուղեղի աշխատանք՝ հոգեբանական և նեյրոկոգնիտիվով պայմանավորված վարքագիծ:

Տվյալ ենթագլխում քննարկվում է կոռուպցիային նպաստող այնպիսի գործոններ, ինչպիսիք են փոխհատուցումը, կոնտրաստի սկզբունքը, ապերցեպցիան, իրադրությունը: Առաջարկվում է նաև կանխարգելիչ հոգեբանական դիմակայունության զարգացման միջոցառումների

իրականացում, ինչպես նաև ներկայացվում է կոռուպցիայի դեմ պայքարի համար հստակ գործողությունների իրականացում, մասնավորապես կրիմինալոգիական ուսումնասիրությունների ինստիտուտի ստեղծումը, բարեվարքության և առաքինության ստուգման նպատակով հակակոռուպցիոն վարքագծի ռիսկերի գնահատման մեխանիզմի ներդրումը և այլն:

‹‹ՀՀ-ում կոռուպցիոն հանցավորության դեմ պայքարի ընդհանուր տեսական հայեցակարգը›› երրորդ գլխի հինգերորդ ենթագլխում քննարկվում է կոռուպցիայի կանխարգելման հետ կապված հարցեր:

Այստեղ բացի գործող օրենսդրության կատարելագործման պահանջից, առաջարկվել է մշակել և ընդունել միմյանց հետ շաղկապված միասնական օրենսդրական ակտեր և դրանցով կարգավորել այնպիսի հարցեր, առանց որոնց հնարավոր չէ ստեղծել պետական ապարատի կոռումպացումը կանխարգելող պայմաններ:

Եթե նշված խնդիրների մի մասը կարող է կարգավորվել գործող օրենսդրության շրջանակներում, ապա մի շարք առանձնահատուկ միջոցներ պետք է նախատեսվեն «Կոռուպցիայի դեմ պայքարի մասին» մեր կողմից առաջարկվող նոր օրենքի շրջանակներում:

Առաջարկվող օրենքում առաջնահերթ կերպով պետք է տրվեն օգտագործվող հիմնական հասկացությունների բնորոշումները, սահմանվեն կոռուպցիայի հետ կապված իրավախախտումների սուբյեկտները, կոռուպցիայի դեմ պայքարի սկզբունքները, այդ երևույթի դեմ պայքարող մարմինների շրջանակը, որոնք, կարծում ենք, բացի ամենօրյա գործառնական պարտականություններն իրականացնող մարմիններից (իրավապահ մարմիններ, կենտրոնական բանկ, ֆինանսների նախարարության հարկային մարմինների վերստուգիչ ստորաբաժանումներ) կարող են լինել անկախ, հատուկ հանձնաժողովներ:

Այս ենթագլխում քննարկվել են նաև կոռուպցիայի հետ կապ կապված մի շարք այլ իրավական հարցեր:

Եզրակացությունում, ի լրումն պաշտպանության ներկայացվող դրույթների, ներկայացվել են հետևյալ եզրահանգումներն ու առաջարկությունները

1. Կրիմինալոգիայի ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի համար կիրառվող մեխանիզմները հետին պլան են մղվել: Մինչդեռ դրանք կոռուպցիայի դեմ պայքարի գործում կարող են մեծ դերակատարություն ունենալ և լինել առանցքային:

Կոռուպցիան հնարավոր է կանխել, երբ այն բացահայտվում է մինչև հանցագործություն դառնալը: Երբ գիտությունները՝ հոգեբանությունը, կրիմինալոգիան, սոցիոլոգիան միավորվում են ոչ թե պատժելու, այլ կանխելու համար: Քրեական իրավունքը կարող է պատժել, իսկ պատիժը

կարող է զսպել վարքագիծը, բայց այն չի փոխի մտածողությունը: Կոռուպցիայի դեմ պայքարի գործում պատիժը միանշանակ անհրաժեշտ է, բայց ոչ բավարար: Հետևաբար առանց կանխարգելման, մարդու վրա կենտրոնացած մեխանիզմների, պատիժը դառնում է ուշացած արձագանք արդեն ձևավորված վարքագծին: Ուստի իրական փոփոխություն սկսվում է ոչ թե այնտեղ, որտեղ միայն խստացվում են օրենքները, այլ այնտեղ, որտեղ ստեղծվում են պայմաններ՝ մարդուն պաշտպանել հանցավոր ընտրությունից:

2. Կոռուպցիայի դեմ պայքարը ընթանում է դեռևս վաղ ժամանակներից և շարունակվում է մինչ այսօր մնալ արդիական խնդիրներից: Որ՞ն է պատճառը, որ կոռուպցիայի հիմնահարցն ունենալով արդեն բավական մեծ պատմություն և պայքարի փորձ ոչ միայն չի կարողանում ստանալ իր լուծումը, այլև աշխարհում լայն տարածում է ստանում: Կարծում ենք պատճառներից մեկն այն է, որ այսքան ժամանակ կոռուպցիայի դեմ պայքարի առաջնային թիրախ և հիմնական խնդիր դիտարկվել են ինստիտուցիոնալ բարեփոխումները: Մինչդեռ կոռուպցիայի դեմ պայքարի կարևոր թիրախ պետք է լինի նաև անձը՝ մարդկային էակը, որովհետև հենց նա է հանդիսանում կոռուպցիայի հեղինակ: Անգամ եթե յուրաքանչյուր պետություն ունենա հարյուրավոր հակակոռուպցիոն մարմիններ, ունենան հազարավոր օրենքներ կոռուպցիայի դեմ պայքարին նվիրված, մեկ է՝ և՛ այդ մարմինները պետք է ղեկավարի մարդը, և՛ այդ օրենքներով առաջնորդվողները, օրենքը կիրառողները նույնպես պետք է լինեն մարդիկ, ովքեր հենց որոշում են ունենալ կոռուպցիոն, թե հակակոռուպցիոն վարքագիծ: Հետևաբար համակարգային փոփոխությունները դեռ չեն երաշխավորում կոռուպցիայի վերացում, եթե չի փոխվում հասարակության կամ աշխատակիցների՝ այդ համակարգերում ներգրավված անձանց վարքագիծը:

Իհարկե ասվածը չի նշանակում, որ միայն մարդկային գործոնն է կարևոր: Պետական, իրավական, տնտեսական, քաղաքական և այլ համակարգերում կոռուպցիայի դեմ պայքարին նվիրված աշխատանքները, համակարգային բարեփոխումները նույնչափ կարևոր են:

3. Կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարը պետք է կրի նաև անհատական բնույթ, քանի որ առնչվում է անձի հոգեբանության հետ: Եթե մի մարդ դիմում է կոռուպցիայի կենսաբանական պահանջմունքը բավարարելու համար, ապա այն դեպքում, երբ այդ պահանջմունքը պետությունը բավարարի, նա այլևս չի ցուցաբերի կոռուպցիոն վարքագիծ: Իսկ եթե անձը դիմում է կոռուպցիայի, պարզապես լրացուցիչ եկամուտի համար, ապա որքան էլ բարձրացնեն տվյալ անձի աշխատավարձն այն քիչ կլինի, մեկ է նա կցուցաբերի կոռուպցիոն վարքագիծ, քանի որ ցածր

աշխատավարձը չէր պատճառը անձի հանցավոր վարքագծի: Կամ այն իրավիճակում, երբ անձը դիմում է կոռուպցիայի, որպեսզի ենթագիտակցորեն հաղթահարի իր ներանձնային խնդիրը, ապա հակակոռուպցիոն վարքագիծ ունենալու համար նա միայն պետք է հաղթահարի իր այդ խնդիրը և այստեղ պայքարի այլ մեխանիզմներն անօգուտ կլինեն:

Այսինքն՝ կոռուպցիոն վարքագծին դիմելու պատճառները տարբեր են, ուստիև արդյունավետ պայքարի համար տարբեր և անհատական բնույթ պետք է ունենան նաև պայքարի մեթոդները, որում մեծ աջակցություն կարող է ցուցաբերել առաջարկված կրիմինալոգիական ինստիտուտի ստեղծումը: Յուրաքանչյուր կոռուպցիոն վարքագծի պատճառին պետք է տրվի իր լուծումը: Հակառակ դեպքում դա նույնն է ինչ տարբեր հիվանդությունների համար նշանակեն նույն դեղատոմսը: Այդ իսկ պատճառով հակակոռուպցիոն քաղաքականությունը պետք է ուղղված լինի ոչ միայն ընդհանրական այլև անհատական մակարդակում վարքագծային ռիսկերի բացահայտմանն ու նվազեցմանը: Երբ պայքարը դադարում է լինել վերացական և դառնում է թիրախավորված, անձնավորված, այն սկսում է իրական արդյունք տալ:

4. Անձի կենսագործունեության հիմնական պահանջմունքների բավարարվածության բացակայությունը կարող է չեզոքացնել հակակոռուպցիոն մտածողությունը: Եթե անձը չի կարողանում բավարարել նույնիսկ նվազագույն կենսական պահանջմունքները, ապա նման գոյաբանական սպառնալիքի պայմաններում կարող է դիմել կոռուպցիոն վարքագծի, անկախ սեփական արժեքային համակարգից: Այս հանգամանքը հաշվի չառնող օրենսդրական կարգավորումները համարվում են ոչ լիարժեք և արդյունավետությունից զուրկ:

5. Պետական պաշտոնյաների մոտ առկա խաղային պահանջմունքը, խաղատներում խաղալը կամ վերջինիս հետ կապված պարտքերի առկայությունը կարող է ստեղծել ֆինանսական կախվածություն, որն իր հերթին դարձնելով պաշտոնյային խոցելի կոռուպցիոն ազդակների նկատմամբ, կարող է բերել պաշտոնեական լիազորությունների չարաշահման կամ այլ կոռուպցիոն գործարքների իրականացմանը: Ֆինանսական ճնշման ներքո գտնվող պաշտոնյան կարող է օգտագործել իր պաշտոնական դիրքը՝ անձնական խնդիրները լուծելու համար, ինչը խարխլում է պետական կառավարման համակարգի արդյունավետությունը և վնասում հանրային շահին: Այդ պատճառով էլ առաջարկվում է սահմանել օրենսդրական արգելք ՀՀ-ում, որով պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց մասնակցությունը խաղատների և խաղային բուքմեյքերական

գործունեության մեջ կարգելվի: Ընդգծենք, որ պետական պաշտոնյաների կողմից խաղատների այցելության արգելքը դիտարկվում է ոչ թե որպես անձնական ազատության անհարկի սահմանափակում, այլ որպես հանրային շահի պաշտպանություն, կոռուպցիայի կանխարգելման քաղաքականություն, ինչպես նաև այն կծառայի որպես պետական ինստիտուտների նկատմամբ վստահության բարձրացման արդյունավետ գործիք:

6. Կոռուպցիոն վարքագիծը հնարավոր չէ ամբողջապես վերացնել, քանի որ գոյություն ունեն ոլորտներ, որոնք անվերահսկելի են: Օրինակ՝ հնարավոր չէ կանգնել բոլոր ծնողների կողքին և վերահսկել դաստիարակությունը, որն անձի սոցիալականացման գործընթացում կարևոր դերակատարություն ունի հակակոռուպցիոն վարքագիծ ձևավորելու գործում: Ավելին՝ հնարավոր չէ վերահսկել, որ բոլոր մարդիկ ծնվեն բարոյական, օրինապահ և անկողմնակալ: Մինչդեռ հնարավոր է այնպես անել, որ համապատասխան քաղաքականության շնորհիվ հնարավորինս կերտվի օրինապահ քաղաքացի, ինչպես նաև չեզոքացվեն կոռուպցիոն վարքագիծ ծնող հանցավոր տարրերը: Այս համատեքստում կարող ենք ասել նաև, որ կոռուպցիան ի սպառ չի վերանա: Կոռուպցիոն հանցագործությունները նույնպես հանցագործություններ են, ինչպես որ մարդու կյանքի, սեփականության դեմ ուղղված հանցագործությունները: Չենք կարող հույս ունենալ, որ, օրինակ, սպանությունների դեմ պայքարի, կամ գողությունների դեմ պայքարի արդյունքում կգա օր, որ կվերանան այդ հանցագործությունները, ուստի ինչո՞վ են կոռուպցիոն հանցագործությունները տարբերվում մյուս հանցագործություններից, որ նման հույս լինի: Այստեղ նույն մարդն է ընկած խնդրի հիմքում: Բնականաբար, այն չի վերանա: Պարզապես այն շատ ցածր մակարդակի կարող է հասնել թիրախավորված պայքարի արդյունքում:

7. Կոռուպցիան պետք է պարտվի անձի անձի ներսում, որտեղ ձևավորվում է ընտրություն, այլ ոչ թե հակակոռուպցիոն քննչական կոմիտեի սենյակում կամ դատական դահլիճում:

Կոռուպցիայի դեմ պայքարելու համար յուրաքանչյուրը պետք է սկսի իրենից: Ընդ որում՝ ոչ ելույթներով, կարգախոսներով, այլ վարքագծով: Կոռուպցիայի դեմ պայքարը դա յուրաքանչյուր մարդու պայքարը պետք է լինի նախ ինքն իր դեմ՝ իր պահանջմունքների, ցանկությունների և այլ մարտահրավերների, քանի որ շատերն են ուզում էլ ավելի լավ ապրել, սնվել, ճամփորդել, իրենց խնդիրներին ավելի արագ լուծումներ տալ, քան իրենց դա հասանելի է օրենքի սահմաններում: Մինչդեռ չպետք է թույլ տալ, որ անձի բարոյական-արժեքային կողմնորոշումները զիջեն արտաքին գայթակղություններին և ճնշմանը, իսկ պատասխանատվության զգացումը՝ իրավիճակային շահերին: Այստեղ կարևորվում է անձի ինքնագիտակցումը:

8. Մեր հետազոտությունների և վերլուծությունների դիտարկմամբ մեկ առանցքային հիմնական միջոց գոյություն ունի անձին ստիպելու ցուցաբերել հակակոռուպցիոն վարքագիծ: Դա այն է՝ այնպիսի իրավիճակ ստեղծել, որ անձն ինքը ցանկանա նման վարքագիծ ցուցաբերել: Այսինքն, որպեսզի անձն ունենա հակակոռուպցիոն վարքագիծ անհրաժեշտ են այնպիսի կենսապայմաններ և հանգամանքներ, որ կոռուպցիայից հեռու մնալը դառնա անձի ցանկությունը և բխի իր շահերից: ***Կոռուպցիոն վարքագծի ակնկալվող վնասը պետք է գերազանցի ակնկալվող շահը***: Կոռուպցիային դիպչելիս անձը ավելի շատ պետք է տուժի, քան շահի, իսկ ազնվությունը պետք է դառնա ավելի անվտանգ և բարեկեցիկ, քան իրավախախտումը: Վերջիններիս պետությունը և օրենքը կարող են նպաստել այնքանով, որքանով կստեղծեն այդպիսի կենսապայմաններ: Կարծում ենք կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարելու համար այս բանաձևը պետք է ընկած լինի հակակոռուպցիոն յուրաքանչյուր մարտավարության և ռազմավարության հիմքում:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում

1. Զարուհի Հարությունյան «Ընտանիքում առկա քրեածին հանգամանքները որպես կոռուպցիոն վարքագծի պատճառ», Օրենքի պատվար, Երևան, 2021, № 11 (մարտ), էջեր 56-66:
2. Զարուհի Հարությունյան «Ներանձնային խնդիրները որպես կոռուպցիոն վարքագծի», Օրինականություն, Երևան, 2020, № 119, էջեր 22-27:
3. Զարուհի Հարությունյան «Կոռուպցիոն վարքագիծ ուսուցանող որոշ ազդակներ», Եվրոպական համալսարան (գիտական հոդվածների ժողովածու), Երևան, 2020, №11 (01), էջեր 81-92:
4. Զարուհի Հարությունյան «Կոռուպցիոն վարքագծի նախադեպը՝ որպես կոռուպցիոն վարքագծի պատճառ» Օրինականություն, Երևան, 2019, № 109, էջեր 9-12:
5. Զարուհի Հարությունյան «Պահանջմունքների անբավարարությունը՝ որպես կոռուպցիոն վարքագծի պատճառ», Արդարադատություն, Երևան, 2019, № 1(47), էջեր 26-35:
6. Զարուհի Հարությունյան «Անձի պաշտպանական մեխանիզմները՝ որպես կոռուպցիոն վարքագծի», Օրինականություն, Երևան, 2018, № 108, էջեր 14-20:

АРУТЮНЯН ЗАРУИ РОМИКОВНА

КРИМИНОЛОГИЧЕСКИЕ И ПСИХОЛОГИЧЕСКИЕ ПРИЧИНЫ КОРРУПЦИОННОГО ПОВЕДЕНИЯ

Борьба с коррупцией имеет долгую историю, и это явление достаточно хорошо изучено. Однако борьба с коррупцией чаще всего носила уголовный или административный характер, при этом недостаточное внимание уделялось криминолого-психологическим причинам коррупционного поведения. К сожалению, такие меры редко оказываются успешными.

Существуют профилактические подходы, предлагаемые криминологией, но их арсенал используется недостаточно эффективно. В своей диссертации автор стремится восполнить данный пробел, исследуя криминолого-психологические причины коррупции. Он утверждает, что даже если у человека сформировано антикоррупционное мышление, при неудовлетворении базовых жизненных потребностей он может прибегнуть к коррупционным действиям. Законы, которые не учитывают этих потребностей, оказываются неэффективными, поскольку человек не может действовать вопреки своей природе, а законы, созданные природой, не изменяются законами, созданными людьми. Более того, к психологическим причинам коррупции автор относит искажение потребностей.

Автор подробно рассматривает такие факторы, как процесс социализации личности. Он анализирует последствия неполного детства, чувство неполноценности и другие психические процессы, которые могут способствовать девиантному поведению. Особое внимание уделяется роли семьи как ключевого элемента социализации. Отмечается, что влияние семьи на ребенка наиболее сильно на ранних этапах, и хотя с возрастом оно может ослабевать, оно никогда не исчезает полностью.

После анализа роли семьи автор рассматривает влияние образовательных учреждений и системы образования на формирование коррупционного поведения. В этой связи предполагается, что уровень образования, интеллекта и правосознания может способствовать или препятствовать коррупции. Также рассматриваются и другие факторы, включая влияние медиа, таких как фильмы, мультфильмы, сказки и компьютерные игры, которые, по мнению автора, могут формировать коррупционное поведение.

Автор утверждает, что одной из причин коррупционного поведения могут быть защитные механизмы личности, такие как вытеснение, отрицание, рационализация, интеллектуализация, замещение, регресс и даже сублимация. Коррупционное поведение также может быть обусловлено внутриличностными особенностями, такими как срочность, альтруизм, эмпатия, негативное отношение к работе, правовой нигилизм, эгоизм, стресс, депрессия и тревожность.

Кроме того, автор считает, что к коррупционному поведению могут приводить такие механизмы, как компенсация, принцип контраста, подражание, восприятие норм одобрения. Наказания и судебные преследования не являются достаточными мерами для борьбы с коррупцией; необходимо, чтобы осужденные проходили определённую "криминологическую обработку".

Для повышения эффективности антикоррупционной борьбы автор предлагает принять специализированный закон о противодействии коррупции. Он считает, что успешная борьба с коррупцией возможна только в том случае, если она затрагивает не только правовые и экономические аспекты, но и личность коррупционера. Коррупционное поведение имеет индивидуальные причины, которые различаются в зависимости от ситуации и психотипа конкретного человека.

Автор также подчеркивает, что борьбу с коррупцией каждый должен начинать с себя. Это включает борьбу с собственными требованиями, желаниями и соблазнами, так как многие люди стремятся улучшить свою жизнь, быстрее решать свои проблемы и добиваться личных целей, зачастую обходя закон.

В заключение, автор приходит к выводу, что полностью искоренить коррупцию невозможно, но можно добиться снижения её уровня.

ZARUHI ROMIK HARUTYUNYAN

CRIMINOLOGICAL AND PSYCHOLOGICAL CAUSES OF CORRUPT BEHAVIOR

The fight against corruption has a long history, and thus, the phenomenon is relatively well studied, but the fight against corruption has mainly been criminal or administrative in nature. Meanwhile, insufficient attention was paid to the criminological-psychological causes of corruption. Unfortunately, the fight against corruption is rarely successful in the armory of the implementation of preventive works, as criminology suggests. Within the framework of the dissertation, the author, wanting to fill this gap, studied the causes of criminological-psychological corruption. In the dissertation, the author argues that the basic needs of a person's life, if at all, are not satisfied; even a person with an anti-corruption mindset can resort to corrupt behavior. Laws that do not take such requirements into account are not effective because a person cannot go against nature, and the rules created by people will not change the laws made by nature. Moreover, the psychological causes of corruption can be deformed needs.

The author studied the cause of corruption as an individual's socialization process.

The author discusses phenomena such as the consequences of an incomplete childhood, the inferiority complex, and other mental processes that can cause corrupt behavior.

The author then explores the family as the primary unit of socialization. It is said that the family infection is the strongest on the child; it may weaken with age, but it never ends. A series of simple circumstances form corrupt behavior.

After the family, the author explores the role of educational institutions and education in shaping corrupt behavior. In this sense, the author suggests that level contributes to corruption education, intelligence, and legal awareness. In the study of other drivers of corrupt behavior, the author discusses the influence of movies, cartoons, fairy tales, and computer games. The author argues that these impulses can form corrupt behavior. According to the author, the reason for the corrupt behavior may have become human defense mechanisms such as expulsion, denial, projection, rationalization, intellectualization, regression, and even sublimation. Corrupt behavior is encouraged by intrapersonal signs and problems: urgency, altruism, empathy, negative attitude towards work, legal nihilism, selfishness, stress, depression, and anxiety.

The author also believes that compensation, the principle of contrast, imitation, perception, and norms of encouragement can contribute to corrupt behavior.

Penalties and trials are not enough to fight corruption. For that, those who are already punished must receive "criminological treatment."

The author considered the adoption of laws and institutional mechanisms necessary to fight corruption effectively.

According to the author, the fight against corruption can be effective when the goal of the battle is not only the law, economic, and legal systems but also the official who commits corruption because he is the main character in it.

The fight against corruption should also have an individual character because of the reasons. Corruption is different in different situations, and each person has their characteristics and type of psyche.

The author also notes that to fight against corruption, everyone should start with themselves. It is to every person to struggle first against oneself, against one's demands, desires, and other challenges, because many want even better to live, to eat, to travel, and to give solutions to their problems faster than they can within the limits of the law.

According to the author, corruption cannot be eradicated, but it can be ensured at a low level.